մութեան 4-րդ աստիճանների պաշկների համար, որով հետև այդպիսինակ պաշկների թոյլտուութիւնը վերապահուած է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի իրաւունքին։ 9 յունուարի 1911 թ. № 1179—1184.

Երկաբերական առաջադրութիւն բոլոր թեմական առաջնորդների անունով, որով առաջադրուեց կարգադրել, որ ոչ մի հոգևոր պաշտօնեայ՝ փոխանորդ, գործակալ և քահանայ, առանց ստանալու առաջնորդի միջոցով Տ. Տեղակալի կանխագոյն թոյլտուութիւնը չգայ Ս. Էջմիածին որ և է՝ անձնական կամ պաշտօնական գործով։ 10 յունուարի 1911 թ. № 1191—1196.

Առաջադրութիւն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Տ. Լուսարարապետի անունով, որի հետ ուղարկուեց ներքին գործոց Տ. Նախարարի առանձին գործերի պաշտօնեայ Պ. Պետրովի՝ Մայր Տաճարին նուիրաբերած մի արծաթէ ոսկեզօծ կանթեղ իւր պարագաներով, գործադրելու Տաճարում։ 11 յունուարի 1911 թ. № 1200

Առաջադրութիւն Վրաստանի Հայոց կոնսիստորիայի Տ. Նախագահողի անունով, որով առաջադրուեց յորդորել Տփխիսի հայազգի հաւքարներին իրենց վաղեմի խոստման և սովորութեան համաձայն շարունակեն հոգալու Ս. Էջմիածնի Մայր Տաճարում գործադրուող մոմը։ 12 յունուարի 1911 թ. № 1203.

ԲԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Դեկտեմբերի 3-ին թ. 785. Սինոդը լսելով Շամախու կոնսիստորիայի 1909 թ. յուլիսի 25-ի № 920 յայտարարութիւնը, որոշեց. Ներքին Գործերի Պ. Նախարարի թոյլտուութեան համաձայն, պատուիրել Շամախու կոնսիստորիային ընդունել Ղուբայի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցու անունով տիկին Ամէլ Ստեփանեանի իւր ա-

մուսնու յիշատակը յաւերժացնելու համար նուիրած կէս մաս տունը, յարակից շինութիւններով և գետնով, կազմելով այդ մասին պատշաճ կալուածագիր։

Դեկտեմբերի 11-ին թ. 797. Սինոդը համաձայն օրէնքի XI հատ. I մասի 1148 յօդուածի Վեհափառ Կաթուղիկոսի մահուան հետևանքով, որոշեց. Սինոդիս աւագագոյն անդամ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանին ճանաչել Սինոդի Ատենապետի Տեղակալ, այնու, որ այդ պաշտօնի հետ վարէ նաև իւր անդամական պարտականութիւնը, որի մասին յայտնել Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդներին, Ամենապատիւ Պատրիարքներին, Սսոյ Ս. Կաթուղիկոսին և արտասահմանի Հայոց վիճակաւոր առաջնորդներին։

Դեկտ. 24-ին թ. 818. Սինոդը լսեց Ներքին գործերի պ. Նախարարի անցած նոյեմբերի 22-ի № 10791 առաջադրութիւնը, որում ասուած է, թէ Կայսերական Զինուորական-բժշկական ճեմարանը ներկայացրել է Նախարարութեանը Ղարաբաղի Հայոց կոնսիստորիայից Կոստանդ Մելիքեանին տուած մի ծննդական վկայական, որի հետևեալ երեսում գրուած է ծանօթութիւն կոնսիստորիայի կողմից, թէ «Կոստանդը նոյն և Կոստանդին, Մելիքեանց նոյն և Մելիքով»։ Պ. Նախարարը գտնում է, որ այսպիսի դէպքը ստեղծում է մի շարք բարդութիւններ քաղաքական-իրաւական տեսակի ոչ միայն յիշեալ անձնաւորութեան համար, այլ և այն բոլորի, որոնց դէպք կլինի շրջուել նորա հետ ամուսնական, ժառանգական և առհասարակ սեպհականութեան իրաւունքի խնդիրներում. ուստի որոշեց, պատուիրել բոլոր թեմական առաջնորդներին, կոնսիստորիաներին, փոխանորդներին և հոգևոր կառավարութիւններին խստիւ հետևել, որ ծննդական վկայականներ տալու դէպքում և մետրիքական մատեաններից քաղուածներ տալիս երբէք թոյլ չտան որևէ շեղում օրէնքի պահանջից։ Այս մասին յայտնել ի գիտութիւն Պ. Նախարարին։

Դեկտ. 27-ին Թ. 821. Սինոդը լսեց Երևանի Նահանգապետի գրությունը Աղէքսանդրոպոլի գաւառի Սպիտակ գիւղի Ս. Մինաս եկեղեցու զանգագատան շինութեան թոյլտուութեան մասին, որոշեց. յայտնել Երևանի Նահանգապետին, թէ Սինոդի կողմից չկայ արգելք Սպիտակ գիւղի Ս. Մինաս եկեղեցու զանգագատան շինութեան վերաբերմամբ։

Դեկտ. 27-ին Թ. 822. Սինոդը, լսելով Ներքին գործերի Պ. Նախարարի անցած նոյեմբերի 21-ի № 10838 առաջադրությունը, որում ասուած է, թէ վերջին ժամանակներս մեծ թուով հրէաներ ընդունում են հայ—լուսաւորչական կրօնը, և այդպիսի կրօնափոխութիւնը շատ դէպքերում լինում է հետևանք ոչ թէ նրանց անկեղծ համակրանքի դէպի հայ—լուսաւորչական եկեղեցին, այլ միայն կամենում են օգտուել այն բոլոր նիւթական և քաղաքական իրաւունքներից, որ ձեռք են բերում քրիստոնէութիւն ընդունող հրէաները և որով խուսափում են նրանց համար սահմանուած քաղաքացիական սահմանափակումներից, որոշեց. պատուիրել հայոց թեմական առաջնորդներին, ի լրումն և ի փոփոխումն 1909 թ. նոյեմբ. 13-ի №№ 2701 և 2706 շրջաբերականների, նախապէս ժողովել կարևոր տեղեկութիւնները, թէ արդարև խնդրատու հրէան անկեղծ համակրանք է տածում դէպի քրիստոնէական վարդապետութիւնը և Հայ եկեղեցին և ապա թոյլ տալ կոնսիստորիային խնդրատուի մկրտութեան մասին յարուցած միջնորդութիւնը ներկայացնել Սինոդիս, պատշաճ իշխանութեան թոյլտուութիւնը խնդրելու համար։

Դեկտ. 26-ին, Թ. 825. Սինոդը որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին Ռուս—Ճապոնական պատերազմում ընկած զինուորների յիշատակը յաւերժացնելու համար ժողովուած 14 ռուբլի. 12 կոպ. գումարը ուղարկել ըստ պատկանելոյն։

Դեկտեմբեր 27-ին, Թ. 826. Սինոդը որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին Կարմիր—Խաչի ընկե-

բութեան օգտին ստացուած 83 ռուբլի 70 կոպ. ուղարկել յիշեալ ընկերութեան։

Դեկտ. 27-ին Թ. 827. Մինոգը լսեց Երուսաղէմի օգտին ժողոված գանձանակագրամի մասին զեկուցումն և որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին ուղարկել Երուսաղէմի պատրիարքական Տեղապահին 1910 թ. ընթացքում ժողոված գանձանակագրամ 296 ռ. 43 կ.։

Դեկտ. 27-ին, Թ. 831. Մինոգը լսեց Ռուս—Ճապոնական պատերազմում ընկած զինուորների և նրանց ընտանեաց օգտին ժողոված գանձանակագրամի մասին գործը և որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին ուղարկել ըստ պատկանելոյն 1910 թ. ընթացքում ժողոված յիշեալ նպատակի համար 419 ռուբ. 81 կոպ. գումարը։

Դեկտ. 27-ին, Թ. 832. Մինոգը լսեց Կոյրերի օգտին ժողոված գանձանակագրամի գործը և որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին ուղարկել Կուրաց Հոգաբարձութեան անունով 1910 թ. ընթացքում ժողոված գանձանակագրամը՝ 119 ռ. 19 կոպ.։

Դեկտ. 27-ին, Թ. 833. Մինոգը լսեց խուլերի և համրերի օգտին ժողոված գանձանակագրամի գործը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին ուղարկել ըստ պատկանելոյն, յիշեալ խուլերի և համրերի օգտին 1910 թ. ընթացքում ժողոված գանձանակագրամ 100 ռուբլի 93 կոպ.։

Դեկտ. 27-ին, Թ. 814. Մինոգը լսեց Աբասթումանի թոքախտաւորների բուժարանի օգտին ստացուած գանձանակագրամի գործը և որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին ուղարկել ըստ պատկանելոյն յիշեալ նպատակի համար ստացուած 205 ռուբ. 37 կոպ. գանձանակագրամը։

Դեկտ. 27-ին, Թ. 835. Մինոգը լսեց Արմաւիրի Հայոց եկեղեցիների գործակալ Գաբրիէլ քահանայ Թուել-

եանցի և նոյն տեղի ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխան Սահակ Սեֆերեանցի յայտարարութիւնը, որի հետ ներկայացնում են Մինոգին 500 ռուբ. Մայր Աթոռի Ճեմարանի օգտին հանգուցեալ Մատթէոս Բ. Կաթուղիկոսի մահուան առիթով պսակի փոխարէն, և որոշեց ստացած 500 ռուբլին դործադրել Մ. Աթոռի Ճեմարանի կարիքների համար և Մինոգի կողմից գոհունակութիւն յայտնել Արմաւիրի հայ հասարակութեանը, նուիրած դրամի համար։

Դեկտ. 29-ին, թ. 840. Մինոգը լսեց Ներքին Գործոց Պ. Նախարարի նոյեմբերի 29-ի № 10949 առաջադրութիւնը Հայկական հաստատութիւնների պաշտօնեաներ նշանակելու մասին և որոշեց. նախ՝ այսուհետև քահանայ, սարկաւագ և շտատնի դպիր ձեռնադրելու դէպքում նախապէս հարցնել պատշաճ նահանգական իշխանութեան համաձայնութիւնը. երկրորդ՝ Պ. Նախարարի առաջադրութեան պատճէնը ներկայացնել Ամենապատիւ Տ. Տեղակալին. ի նկատի ունենալու փոխանորդ, Հոգևոր Ճեմարանի Տեսուչ և ուսուցիչներ, վանքերի վանահայրեր և թեմական դպրանոցների տեսուչներ նշանակելու և հաստատելու դէպքում, և տալու թեմական դպրոցների հոգաբարձութիւնների նախագահներին պատուէր՝ նախապէս հարցնել նահանգական իշխանութեան համաձայնութիւնը դպրոցների ուսուցիչներ հրաւիրելիս. երրորդ՝ պատուիրել թեմական առաջնորդներին կոնսիստորիայի անդամ նշանակելիս հարցնել նախապէս տեղական նահանգապետի համաձայնութիւնը։